

ՀԱԳՄՉ 10.70

Առաջին հրատարակություն
1 սեպտեմբերի 2007թ.
Ներառում է փոփոխություն

Անվտանգություն և աշխատանքի հիգիենա՝ շրջակա միջավայրի պաշտպանություն

Տնօրեն,
ՄԱԿ-ի Ականագերծման ծառայություն (ՄԱԿԱԾ),
2 United Nations Plaza, DC2-0650
New York, NY 10017
USA

Էլ. Փոստ՝ mineaction@un.org
Հեռախոս՝ (1 212) 963 1875
Ֆաքս՝ (1 212) 963 2498
Կայքէջ՝ www.mineactionstandards.org

Նախագրուշացում

Սույն փաստաթուղթն ուժի մեջ է մտել կազմի վրա նշված ամսաթվից: Քանի որ Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչները (ՀԱԳՄՉ) պարբերաբար վերանայվում և թարմացվում են, դրանից օգտվողները պետք է այցելեն ՀԱԳՄՉ ծրագրի կայքէջը վերջինիս կարգավիճակը ստուգելու նպատակով (<http://www.mineactionstandards.org/> կամ ՄԱԿԱՄ կայքէջ հետևյալ հասցեով՝ <http://www.mineaction.org>):

Հեղինակային իրավունք

ՄԱԿ-ի սույն փաստաթուղթը Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչ է (ՀԱԳՄՉ) և սեփականության իրավունքով պաշտպանված է ՄԱԿ-ի կողմից: Ոչ սույն փաստաթուղթը, ոչ էլ դրա որևէ հատված չի կարելի վերարտադրել, պահել կամ որևէ այլ միջոցով, կամ ձևով փոխանցել որևէ այլ նպատակի համար՝ առանց ՄԱԿ-ի անունից գործող ՄԱԿԱՄ-ի կողմից նախապես գրավոր համաձայնություն ձեռք բերելու:

Սույն փաստաթուղթը ենթակա չէ վաճառքի:

Տնօրեն
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱՄ)
2 United Nations Plaza, DC2-0650
Նյու Յորք, NY 10017
ԱՄՆ

Էլ-փոստ՝ mineaction@un.org
Հեռախոս՝ (1 212) 963 1875
Ֆաքս՝ (1 212) 963 2498

Բովանդակություն

Նախաբան	iv
Ներածություն	v
Անվտանգություն և աշխատանքի հիգիենա – շրջակա միջավայրի պաշտպանություն	1
1. Ծավալ.....	1
2. Փաստաթղթեր	1
3. Տերմիններ, սահմանումներ և հասկացումներ.....	1
4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության շրջանակներ	2
5. Ընդհանուր պահանջներ	2
6. Ականագերծում	3
6.1. Մեխանիկական գործողություններ.....	3
6.2. Պայթուցիկ զինամթերքի վնասագերծման (ՊԶՎ) գործողություններ.....	3
6.3. Անվտանգ տարածքների պաշտպանությունը վտանգավոր աղտոտումից.....	4
6.4. Բեկորների, գլաքարերի և մետաղալարերի հեռացում	5
6.5. Թունավոր և վտանգավոր թափոնների հեռացում.....	5
6.6. Ջրային հոսանքների խցանում.....	6
6.7. Օդի որակի վատթարացում	6
6.8. Բուսականության այրում.....	6
7. Զինապաշարների ոչնչացման գործողություններ.....	7
8. Աշխատանքային տեղամասեր և ժամանակավոր կառույցներ	7
8.1. Տեղամասի ընտրությունը և տեղակայում	7
8.2. Զուգարաններ	8
8.3. Կենցաղային աղբ	8
8.4. Կեղտաջրեր.....	8
8.5. Կենցաղային ջրամատակարարում	9
8.6. Վառելիքի, նավթի և քսայուղերի (ՎՆՔ) տարածքներ	9
8.7. Պահպանման տարածքներ	9
8.8. Ականագերծման աշխատանքների ավարտից հետո կատարվող քայլեր	9
9. Վտանգավոր նյութերի տեղափոխում	10
10. Մշակութային կամ պատմական արժեք ներկայացնող տարածքներ.....	10
11. Բնապահպանական պատահարներ.....	11
12. Պատասխանատվություններ և պարտավորություններ.....	11
12.1. ԱԳԱՄ-ի պատասխանատվություններ	11
12.2. Ականագերծող կազմակերպության պատասխանատվություններ.....	11
Հավելված Ա (նորմատիվ) Փաստաթղթեր	13
Դ.1 Տեղանքի ընտրություն	20
Դ.2 Ջրամատակարարում	20
Դ.3 Պինդ թափոններ	20
Դ.4 Արտաթորանք	21
Դ.5 Կեղտաջրեր	21
Դ.6 Դեմոքրիլիզացիա.....	22
Փոփոխությունների գրանցում	23

Նախաբան

Մարդասիրական հակաականային ծրագրերի միջազգային չափորոշիչները առաջին անգամ առաջարկվել են 1996թ. հուլիսին Դանիայում տեղի ունեցած միջազգային տեխնիկական գիտաժողովի աշխատանքային խմբերի կողմից: Չափորոշիչներ են սահմանվել ականազերծման բոլոր ասպեկտների համար, չափանիշեր են առաջարկվել և համաշխարհային նոր սահմանում է տրվել «ականազերծում» գաղափարին: 1996թ վերջում Դանիայում առաջարկված սկզբունքները զարգացվել են ՄԱԿ-ի կողմից անցկացվող ժողովի աշխատանքային խմբի կողմից և մշակվել են Մարդասիրական ականազերծման գործողությունների միջազգային չափանիշերը: Առաջին հրատարակությունը տպագրվել է ՄԱԿ-ի ականազերծման ծառայության (ՄԱԿԱԾ) կողմից 1997թ. մարտին:

Այս նախնական չափորոշիչների ծավալները այդ ժամանակից ի վեր ընդլայնվել են՝ ներառելու հակաականային գործողությունների այլ բաղադրիչներ և արտացոլելու գործողությունների, գործընթացների, գործելառճերի և նորմերի հետ կապված փոփոխությունները: Չափորոշիչները վերամշակվեցին և վերանվանվեցին որպես Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ), որի առաջին հրատարակությունը լույս տեսավ 2001թ. հոկտեմբերին:

ՄԱԿ-ն ընդհանուր պարտավորություններ ունի ականային ծրագրերի արդյունավետ կառավարումը խրախուսելու և կյանքի կոչելու համար, որը ներառում է չափորոշիչների մշակումն ու պահպանումը: Այդ պատճառով ՄԱԿԱԾ-ը ՄԱԿ-ում տեղակայված այն գրասենյակն է, որը պատասխանատու է ՀԱԳՄՉ-ի մշակման և պահպանման համար: ՀԱԳՄՉ ստեղծվում է Ժնևի Մարդասիրական ականազերծման միջազգային կենտրոնի աջակցությամբ:

ՀԱԳՄՉ-ն պատրաստելու, վերանայելու և վերափոխելու աշխատանքը իրականացվում է տեխնիկական հանձնաժողովների կողմից միջազգային, կառավարական և հասարակական կազմակերպությունների օժանդակությամբ: Յուրաքանչյուր չափորոշիչի ամենավերջին տարբերակը, տեխնիկական հանձնաժողովների կատարած աշխատանքի հետ միասին կարելի է գտնել <http://www.mineactionstandards.org> կայքում: Առանձին ՀԱԳՄՉ-ները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ արտացոլելու հակաականային գործողության զարգացող նորմերն ու պրակտիկան և միջազգային կանոնակարգերի և պահանջների շարքում ներառելու կատարվող փոփոխությունները:

Ներածություն

Ականազերծման գործողությունները կարող են հսկայական վնաս հասցնել այն շրջակա միջավայրին որում դրանք իրականացվում են: Ըստ որում, այդ վնասները ներառում են ոչ միայն վնասազերծելու կարճաժամկետ հետևանքները, այլև հողին կամ ջրային համակարգերին հասցված վնասները, որոնք կարող են հանգեցնել բուսականության վերացման, ջրային հոսանքների քայքայման և կամ հողի բաղադրության փոփոխության: Ականազերծման գործողությունները կարող են նաև իրենց բացասական ազդեցությունը թողնել միջատների և վայրի կենդանիների, ինչպես նաև պատմական և մշակութային հուշարձանների վրա:

Երկրի իշխանությունները, ինչպես նաև ականազերծող կազմակերպությունները պետք է պատասխանատվություն կրեն ոչ միայն ականազերծման գործողությունների ապահովության, անվտանգության և արդյունավետության համար, այլև պարտավոր են նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցությունը: Նրանք պետք է միջավայրը պահպանեն իր նախկին վիճակին մոտ, իսկ հնարավորության դեպքում, անգամ ավելի բարվոք վիճակում, քան մինչև ականազերծման գործողություններն իրականացնելն էր, այսինքն՝ այնպիսի վիճակում, որը կապահովի ականազերծման գործողությունների իրականացումից անմիջապես հետո հողի նպատակային օգտագործումը: Երկրի իշխանությունները պետք է շրջակա միջավայրի կառավարման քաղաքականությունն արտացոլող փաստաթղթեր մշակեն, որոնք կսահմանեն ազգային քաղաքականությունից բխող ականազերծման գործողությունների ազգային չափորոշիչները կամ այլ հարակից փաստաթղթերը:

Անվտանգություն և աշխատանքի հիգիենա՝ շրջակա միջավայրի պաշտպանություն

1. Ծավալ

Այս չափորոշիչը ներկայացնում է մի շարք ուղոցույցներ, որոնք հնարավորություն կտան կիրառել շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված նվազագույն միջոցառումներ՝ ապահովելով ականազերծման գործողությունների նվազագույն ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և ականազերծումից հետո այդ հողերի նպատակային օգտագործումը:

Թեև այս չափորոշիչը վերաբերում է հատկապես ականազերծման գործողություններին, սակայն ներկայացված պահանջները հավասարապես կիրառելի են այլ հակաականային գործողությունների, հատկապես, պայթուցիկ զինամթերքի վնասազերծման ժամանակ:

2. Փաստաթղթեր

Հավելված Ա-ում բերված է նորմատիվ փաստաթղթերի ցանկը: Նորմատիվ հղումները կարևոր փաստաթղթեր են, որոնց հղում է կատարվում սույն չափորոշիչում և որոնք կազմում են սույն Ուղեկիշի դրույթների մի մասը:

3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ

Հավելված Բ-ում բերված է սույն չափորոշիչում կիրառված տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը: ՀԱԳՄՉ-ում կիրառված բոլոր տերմինների, սահմանումների և հապավումների ամբողջական ցանկը բերված է ՀԱԳՄՉ 04.10-ում:

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքում «պետք է», «հարկավոր է» և «կարող է» բառերն օգտագործված են համապատասխանության նախատեսված մակարդակը ցույց տալու նպատակով: Այդ կիրառումը համապատասխանում է ISO չափորոշիչների և ուղեկիշների լեզվի հետ:

ա) «պետք է» կիրառվում է ցույց տալու այն պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները, որոնք պետք է ընդունվեն՝ չափորոշիչն ամբողջությամբ բավարարելու համար:

բ) «հարկավոր է» օգտագործվում է նախընտրելի պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները ցույց տալու համար:

գ) «կարող է» օգտագործվում է գործողության հնարավոր մեթոդը կամ ընթացքը ցույց տալու համար:

«Ականազերծման գործողությունների ազգային մարմին կամ մարմիններ» (ԱԳԱՄ) տերմինը վերաբերում է ականապատ տարածքներ ունեցող բոլոր այն երկրների պետական գերատեսչություններին, կազմակերպություններին կամ հաստատություններին, որոնց պարտավոր են կարգավորել, կառավարել և համակարգել ականազերծման գործողությունները: Հիմնականում Ականազերծման գործողությունների ազգային կենտրոնը (ԱԳԱԿ) կամ դրան համարժեք հաստատությունը հանդես է գալիս որպես ԱԳԱՄ կամ գործում է նրա անունից հակաականային բոլոր գործողությունների պարագայում: Առանձին իրավիճակներում և պահերին ՄԱԿ այլ ճանաչված միջազգային կառույցը կարող է հարմար կամ անհրաժեշտ գտնել ստանձնելու ԱԳԱՄ-ի բոլոր պատասխանատվությունները կամ դրանց մի մասը և իրականացնել բոլոր գործառույթները կամ դրանց մի մասը:

«Ականազերծող կազմակերպություն» տերմինը վերաբերում է ցանկացած կազմակերպությանը (պետական, հասարակական կամ առևտրային կազմակերպություն), որը պատասխանատու է ականազերծման ծրագրեր կամ առաջադրանքներ իրականացնելու համար: Ականազերծող կազմակերպությունը բաղկացած է կենտրոնական գրասենյակից և օժանդակող բաղադրիչներից և ունի մեկ կամ ավելի ենթաստորաբաժանումներ:

«Պաշտպանական աշխատանքներ» տերմինը վերաբերում է կառուցված արգելապատնեշներին, խրամատներին (փոսերին) կամ հողաթմբերին, որոնց նպատակն է նվազեցնել հողի ցնցման, աղմուկի, պայթյունի կամ բեկորների ազդեցությունը և այդ կերպ պաշտպանել աշխատակազմին, գույքը, ենթակառուցվածքները կամ շրջակա միջավայրը:

«Շրջակա միջավայր» տերմինը վերաբերում է այն տարածքին, որտեղ աշխատում է կազմակերպությունը, օդին, ջրին, հողին, բնական պաշարներին, բնությանը, կենդանական աշխարհին, մարդկանց և դրանց փոխհարաբերությանը:

4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության շրջանակներ

ՄՉԿ 14000 Շրջակա միջավայրի կառավարման (տես Հավելված Գ) սկզբունքների համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցությունը ներառում է.

- Ա. Օդի (աղմուկ, ծուխ), ջրի և հողի աղտոտման նվազեցում;
- Բ. Թափոնների նվազեցում և հեռացում, մասնավորապես, խոսքը վերաբերում է թունավոր և վտանգավոր թափոններին;
- Գ. Էներգիայի սպառման կրճատում;
- Դ. CO2 արտանետումների նվազեցում;
- Ե. Հողի օգտագործում;
- Զ. Ժառանգականության ռիսկ.

Մանրամասների համար տես ՄՉԿ 14000:

5. Ընդհանուր պահանջներ

Ականազերծման գործողությունները պետք է իրականացվեն առանց վնաս հասցնելու գույքին կամ ենթակառուցվածքներին, հնարավորինս նվազեցնելով շրջակա միջավայրի վրա վերջինիս ազդեցությունը և ապահովելով տեղական համայնքների և ականազերծող անձնակազմի անվտանգությունը:

Ականազերծման գործողությունները պլանավորելիս հարկավոր է հաշվի առնել այդ գործողությունների հնարավոր ազդեցությունները, իրականացվելիք միջոցառումները, որոնք թույլ կտան պաշտպանել շրջակա միջավայրը և գույքին կամ ենթակառուցվածքներին, ինչպես նաև անձնակազմին հնարավոր վնասները:

Ականազերծող կազմակերպությունները պետք է ապահովեն, որ տարածքը որտեղ իրականացվում են ականազերծման գործողությունները վերջինիս ավարտից հետո հնարավոր լինի օգտագործել ըստ նպատակի:

Հատուկ ուշադրություն պետք է հատկացվի կենսապահովման կամ տնտեսական նպատակներով օգտագործվող գույքին, ենթակառուցվածքներին և հողին՝ ապահովելով ականազերծումից հետո դրանց նպատակային օգտագործումը:

Նշում՝ “Ականազերծման ենթարկված հողը” ներառում է վարչական և օժանդակման նպատակով օգտագործվող տարածքները, ինչպես օրինակ ժամանակավոր ապաստանները /բնակարանները/ կամ օժանդակ տարածքները:

6. Ականազերծում

6.1. Մեխանիկական գործողություններ

ԱԳԱՄ-ի պահանջների համաձայն ականազերծման ընթացքում օգտագործվող սարքերի աշխատանքը, վերանորոգումը, շահագործումը և սպասարկումը պետք է իրականացվի այնպես, որը հնարավորինս նվազեցնի շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցությունը:

ԱԳԱՄ-ը պետք է հստակեցնի ներկայացվող պահանջներն այն դեպքերի համար, երբ մեխանիկական գործողությունները ներառում են բուսականության հեռացում կամ իրականացվում են ողողամաշվածքի ենթակա տարածքների վրա՝ սահմանելով այն միջոցառումները, որոնք պետք է իրականացվեն ականազերծող կազմակերպության կողմից ապահովելու համար բուսականության հետագա աճը և նվազեցնելով ողողամաշումը:

Այսպիսի միջոցառումները կարող են ներառել.

- Ա. Վերացանք կամ վերատունկ (օր. խոտ, ծառեր, հողածածկույթ)
- Բ. Մշակված հողի վերադարձ ազդեցության ենթարկված տարածքներ (հող, որը ենթարկվել է մեխանիկական մաղման կամ վերականգնման և այլն)
- Գ. Քամուց պաշտպանիչ պատնեշների տեղադրում կամ կառուցում
- Դ. Ջրահեռացման համակարգերի ստեղծում
- Ե. Մեխանիկական գործողությունների իրականացում այն ժամանակահատվածում, երբ հողը և բուսականությունը պակաս խոցելի են:
- Զ. Համապատասխան սարքերի օգտագործման շնորհիվ խորը փոսեր փորելուց խուսափելը:

Մեխանիկական գործողությունների վերաբերյալ համայնքների իրազեկումը ներառում է գույքի սեփականատերերին և տեղական իշխանություններին գույքի ու ենթակառուցվածքների հնարավոր վնասների մասին խորհրդատվությունը: Անհրաժեշտության դեպքում ականազերծվող տարածքներում գույքի տերերին և վերահսկողներին տեղեկատվություն պետք է տրամադրվի հասցվելիք վնասները նվազագույնի հասցնելու ուղիների վերաբերյալ:

6.2. Պայթուցիկ զինամթերքի վնասազերծման (ՊԶՎ) գործողություններ

Ականները կամ պատերազմից մնացած պայթուցիկ զինամթերքը (ՊՊՄ) պետք է այնպես վնասազերծվեն, որպեսզի հնարավորինս նվազագույնի հասցվի շրջակա միջավայրի վրա ազդեցությունը՝ առանց վտանգի ենթարկելու գույքը և ենթակառուցվածքները: Եթե ականները և ՊԶՎ-ները տեղում պետք է վնասազերծվեն՝ վտանգելով գույքը և ենթակառուցվածքները, ապա պետք է պաշտպանական միջոցառումներ իրականացվեն: Անգամ պաշտպանական միջոցառումներ իրականացնելու պարագայում, եթե գույքին և ենթակառուցվածքներին վնաս հասցնելու վտանգը պահպանվում է, ապա ԱԳԱՄ-ը, տեղական իշխանությունները և համայնքները պետք է գործողությունների վերաբերյալ խորհրդատվություն ստանան:

Հարկավոր է ուշադրություն դարձնել նաև շրջակա միջավայրի (ներառյալ բուսականության) աղտոտմանը բեկորներով, թունավոր կամ վտանգավոր նյութերով և միջոցառումներ պետք է ձեռնարկվեն դրանից խուսափելու կամ աղտոտումը նվազեցնելու ուղղությամբ:

Նշում՝ Բեկորները կարող են վնասել որպես փայտանյութ օգտագործվող ծառերը կամ կարող են ազդել բերքահավաքի վրա՝ հողում գտնվող սուր բեկորներով վնասելով կենդանիներին և այդ գործընթացում ներգրավված մարդկանց:

Եթե հավանականությունը մեծ է, որ հողի ցնցումը կամ աղմուկը կարող են ազդել համայնքի բնակիչների վրա, ապա պետք է միջոցներ ձեռնարկվեն դրանք նվազագույնի հասցնելու ուղղությամբ: Այս միջոցառումները կարող են ներառել.

- Ա. Ականազերծման գործողությունների իրականացում բնակելի տարածքներից հեռու գտնվող վայրերում;
- Բ. Սահմանափակել յուրաքանչյուր միավորի առանձին ականազերծումը;
- Գ. Օգտագործել փոսերը ձայնը խլացնելու նպատակով;
- Դ. Պաշտպանական աշխատանքներ իրականացնել հողի ցնցումները և աղմուկը սահմանափակելու համար;
- Ե. Որոշ օդերևութաբանական պայմանների առկայության դեպքում սահմանափակել ականազերծման գործողությունները, օրինակ՝ ցածր ամպերը կարող են մեծացնել աղմուկի ազդեցությունը;

ՊԶՎ գործողությունների ավարտից հետո օգտագործված տարածքը ԱԳԱՄ-ի և տեղական իշխանությունների ու համայնքների պահանջներին համապատասխան պետք է թարմացվի:

Թարմացումը ներառում է.

- Ա. Վերականգնում և ջարդոնի /մնացորդի/ մեծ կտորների հեռացում;
- Բ. Հիմնական ականազերծման գործողությունների արդյունքում գոյացած փոսերի և ուրբափոսերի լցում;
- Գ. Այն տարածքների ցանկապատում և նշագրում, որտեղ հողում հնարավոր է լինեն մնացորդային ոչ պայթուցիկ վտանգավոր մետաղներ;

Անհրաժեշտության դեպքում, զինամթերքի վնասազերծման համար օգտագործված հողը կարող է պաշտոնապես փոխանցվել /հանձնվել/ ՀԱԳՄՉ 08.30-ի պահանջներին համապատասխան:

6.3. Անվտանգ տարածքների պաշտպանությունը վտանգավոր աղտոտումից

Ականազերծող կազմակերպությունը պետք է.

- Ա. Արգելի ականների կամ ՊԶՎ-ների տեղաշարժը աշխատանքային տարածքներից, եթե դա նախատեսված չէ ականազերծման կամ այլ լիազորված գործողությունների ծրագրով;
- Բ. Աշխատանքային գոտուց տեղափոխվող ցանկացած ականի կամ ՊԶՎ-ի պարագայում մինչև դրանց վնասազերծումը ապահովել համապատասխան անվտանգությունը;

- Գ. Իրականացնել աշխատանքային տարածքներից տեղափոխված փաթեթավորված նյութի “Պայթուցիկներից զերծ” (ՊԶ) և վտանգավոր նյութերի և ուսուցման նպատակով օգտագործվելիք ականների կամ ՊՊՄ-ների մանրակրկիտ ստուգումներ;
- Դ. Գնահատված վտանգի գոտու հարակից տարածքների մանրակրկիտ մեխանիկական ստուգում հավաստիանալու համար, որ ոչ մի ական կամ ՊՊՄ չի “նետվել” այդ տարածք:

6.4. Բեկորների, գլաքարերի և մետաղալարերի հեռացում

Բեկորները, գլաքարերը, մետաղալարերը և ցանկացած այլ մնացուկ, որոնք կարող են արգելքներ ստեղծել պետք է հեռացվեն համաձայն թափոնների /աղբի/ կառավարման մասին տեղական կանոնակարգերի և ԱԳԱՄ-ի պահանջների: Անհրաժեշտության դեպքում այդ մասին հարկավոր է տեղեկացնել տեղական համայնքներին:

Մաքրված տարածքի շուրջ ցանկապատերի և նշագրերի հեռացումը կամ տեղափոխությունը և դրանց վերացնելը սովորաբար տարբեր գործողություններ են: Այդ երկու պարտականությունները ականագերծման պայմանագրով պետք է հստակորեն սահմանազատվեն:

Բեկորները, գլաքարերը կամ մետաղալարերը աշխատանքային տեղանքին կից նախապես սահմանված վայր տեղափոխելու դեպքում մինչ տեղափոխելը հարկավոր է հավաստիանալ, որ տվյալ տեղանքը մաքուր է ականներից և ՊՊՄ-ներից: Եղած բեկորները, գլաքարերը և մետաղալարերը մինչ նոր վայր տեղափոխելը պետք է ամբողջությամբ ստուգվեն հավաստիանալու համար, որ վերջիններս չեն պարունակում վտանգավոր բաղադրիչներ: ԱԳԱՄ-ի կամ տեղական իշխանությունների պահանջով տվյալ տեղանքը պետք է նշագրվի և տեղանքը առանձնացվի որպես վտանգավոր թափոնների կուտակման վայր:

Հնարավորության դեպքում խրախուսվում է նյութերի վերամշակումը:

6.5. Թունավոր և վտանգավոր թափոնների հեռացումը

Սովորաբար, ականներում թունավոր կամ վտանգավոր թափոններ չկան: Այնուամենայնիվ, եթե դրանց պայթուցիկ պարունակությունը բաց է, ապա դրանց մնացորդները կարող են անցնել հողի և ջրի մեջ, որն իր հերթին կարող է զգալիորեն ազդել շրջակա միջավայրի վրա: Բացի այդ, նետվող զինամթերքը և պայթուցիկ համակարգերը կարող են պարունակել ազբեստ և հրթիռային հեղուկ վառելիք: Բացի այդ, կարող են հանդիպել նաև քիմիական զենքեր, այդ թվում քլոր և իպրիտ (մանանեխային գազ) պարունակող զինամթերք, ինչպես նաև դատարկված ուրանային արկեր: Վերջինս պետք է վնասագերծվի ՀԱԳՏՕ 09.30 02-ի համաձայն:

Թունավոր և վտանգավոր թափոնների այլ օրինակ կարող են հանդիսանալ.

- Ա. Բռնկվող նյութերը, յուղային թափոնները, քսուկները, վառելիքի գոտիչները (ՎԶ)
- Բ. Մարտկոցները
- Գ. Բժշկական թափոնները, հին դեղորայքը և այլ քիմիկատներ:

Ականագերծման գործողությունների արդյունքում առաջացած ցանկացած թունավոր կամ վտանգավոր նյութ պետք է ԱԳԱՄ-ի պահանջներին համապատասխան հեռացվի:

Ականազերծման գործողությունների արդյունքում առաջացած թունավոր նյութերը չպետք է թաղվեն աշխատանքային տարածքում՝ դրանք պետք է հավաքվեն և տեղափոխվեն դրանց համար նախատեսված հատուկ վայր:

Նշում՝ Օգտագործված մարտկոցները կարելի է պահել միասին՝ մեկ ընդհանուր պիտակ կրող կոնտեյների մեջ, եթե վերջինս իր կառուցվածքով համապատասխանում է նպատակին, թույլ չի տալիս, որ պարունակությունը ծորա և համապատասխանում է մարտկոցներ պահելու պահանջին: Օգտագործված մարտկոցները կարող են հավաքվել մինչև մեկ տարվա ընթացքում՝ նախքան տարածքից դրանք հեռացնելը՝ վերամշակման կամ ոչնչացման նպատակով: Թունավոր և վտանգավոր թափոնների վերաբերյալ ազգային կանոնակարգիչ դաշտի բացակայության դեպքում ականազերծող կազմակերպությունները կարող են դիմել մարտկոցներ մատակարարող կազմակերպություններին՝ օգտագործված մարտկոցները հետ վերցնելու և վերամշակելու հայցով:

6.6. Ջրային հոսանքների խցանում

Ականազերծող կազմակերպությունները չպետք է խցանեն կամ փոխեն ջրային բնական հոսանքները, եթե առանց այդպիսի խցանման կամ հոսանքի հունը փոխելու հնարավոր չէ իրականացնել ականազերծման աշխատանքները: Նման անհրաժեշտության դեպքում հարկավոր է խորհրդակցել հողերի սեփականատերերի կամ համայնքի ղեկավարության հետ և ձեռք բերել նրանց համաձայնությունը նախքան աշխատանքները սկսելը:

6.7. Օդի որակի վատթարացում

Գործողություններն իրականացնելիս ականազերծող կազմակերպությունները պետք է քաջատեղյակ լինեն տեղական համայնքների դիրքին, տարածքում քամու ուղղությանը, ինչպես նաև քամու կողմից ծուխը, փոշին և թունավոր արտանետումները համայնքների ուղղությամբ քշելու հավանականությանը: Ականազերծող կազմակերպությունները պետք է հնարավորինս նվազեցնեն տեղական համայնքների վրա օդի որակի վատթարացման բացասական ազդեցությունը:

Բոլոր այն դեպքերում, երբ հնարավոր է օդի որակի վատթարացման ազդեցություն տեղական համայնքների վրա, ականազերծող կազմակերպությունները պետք է տեղական համայնքներին և իշխանություններին տեղեկացնեն օդի որակի վատթարացման ծավալի, մասշտաբի, տևողության, ինչպես նաև հնարավոր տարհանման մասին:

6.8. Բուսականության այրում

Հարկավոր է խուսափել բուսականությունն այրելուց, այնուամենայնիվ եթե դրա անհրաժեշտությունը կա, հնարավորության դեպքում պետք է իրականացնել հետևյալ վերահսկիչ միջոցառումները.

- ա. Բուսականությունն այրելու պլանները պետք է քննարկվեն հողատերերի/հողօգտագործողների և տեղական իշխանությունների հետ;
- բ. Հողատերերին/հողօգտագործողներին և տեղական իշխանություններին տեղեկացնել ականազերծող/ՊՊՄ տեսակների և դրանց հնարավոր վտանգի մասին (բեկորներ, ցնցումներ, թունավոր նյութեր, ծուխ և այլն) բուսականության այրման հետ կապված:
- գ. Թափոնները չպետք է այրել գիշերը կամ թողնել, որ դրանք այրվեն գիշերվա ընթացքում;
- դ. Այրումը չի կարելի սկսել առանց տվյալ տեղանքում վերահսկման նպատակով համապատասխան անձնակազմի և հրդեհը մարող սարքերի առկայության, իսկ անհրաժեշտության դեպքում, հարկավոր է մարել կրակը:

- ե. Մինչ այրման գործընթացը սկսելը հարկավոր է հաշվի առնել քամու և խոնավության հետ կապված իրավիճակը;
- զ. Այրման գործընթացում ներգրավված ողջ անձնակազմը պետք է տեղեկացված լինի այրման պլանի մասին՝ ներառյալ բոլոր անվտանգության միջոցառումները;
- է. Այրման ուղղությունը որոշելիս՝ թե այրումը վերահսկելու, թե տեղական համայնքների վրա ծխի և մոխրի ազդեցությունը նվազեցնելու նպատակով հարկավոր է հաշվի առնել քամու ուղղությունը;
- ը. Վերահսկման նպատակով այրվող գոտու ամբողջ շրջագծով պետք է ապահովել մուտքի տարածքներ;
- թ. Այրումը պետք է կատարվի դեպի հրդեհի բնական արգելքները՝ ճանապարհները, արահետներ և այլն: Սակայն եթե դա հնարավոր չէ և այրման ենթակա տարածքի շրջագիծը պատված է բուսականությամբ, վերջինս հարկավոր է թրջել նախքան այրումը և շրջագծի շուրջ կանգնած հրշեջ սարքավորումներով զինված անձնակազմը պետք է հսկի իրավիճակը:

7. Զինապաշարների ոչնչացման գործողություններ

Զինապաշարների ոչնչացումը պետք է պլանավորվի և իրականացվի այնպես, որ նվազագույնի հասցվի շրջակա միջավայրի վրա ազդեցությունը: Եթե ԱԳԱՄ անհրաժեշտ համարի, կարող է իրականացվել Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում (ՇՄԱԳ):

Զինապաշարների ոչնչացման վերաբերյալ միջազգային չափորոշիչների, կանոնակարգի, վարքի նորմերի և այլ տեղեկատվական բնույթի տվյալներ ներկայացված են ՀԱԳՄՉ 11.10-ում, որտեղ ներառված են՝

- ա. Արդյունաբերական գործընթացների արդյունքում օդի աղտոտման աստիճանը որոշելու և չափելու վերաբերյալ միջազգային չափորոշիչներ;
- բ. Աշխատանքային միջավայրում աղմուկի ազդեցության աստիճանի չափման և գնահատման մեթոդական ուղեցույց, որը կարող է կիրառվել զինապաշարների ոչնչացման բաց գործողությունների դեպքում:

8. Աշխատանքային տեղամասեր և ժամանակավոր կառույցներ

8.1. Տեղամասի ընտրությունը և տեղակայում

Աշխատանքային տեղամասի և ժամանակավոր կառույցների ընտրության և տեղակայման ժամանակ հարկավոր է հաշվի առնել շրջակա միջավայրի պաշտպանությունը:

Աշխատանքային տեղամասերը և ժամանակավոր կառույցները պետք է կառուցվեն նվազագույնի հասցնելով հողի և ջրային (այդ թվում ստորջրյա) համակարգի աղտոտումը, ինչպես նաև բնության և կենդանական աշխարհի վրա ազդեցությունը:

Անհրաժեշտության դեպքում հարկավոր է կառուցել ժամանակավոր կառույցներ՝ համաձայնեցնելով համայնքի հետ, որպեսզի այդ կառույցները հակառակ ազդեցությունը չթողնեն տեղական պայմանների, տնտեսական գործունեության կամ սոցիալմշակութային արժեքների վրա:

Ժամանակավոր կառույցները պետք է համապատասխանեն ժամանակավոր կառույցների կառուցման վերաբերյալ բոլոր ազգային կամ տեղական կանոնակարգերին:

8.2. Զուգարաններ

Արտաթորանքը չպետք է թափվի ջրային հոսանքների մեջ կամ հողի մակերեսին: Հնարավորության դեպքում, ականազերծման բոլոր տեղամասերում և ժամանակավոր կառույցներում հարկավոր է կառուցել ժամանակավոր զուգարաններ: Դրանցում պետք է հարմարեցված լինեն կախովի ջրային բաքեր, որոնք կեղտաջրերը կմղեն կոյուղի-տանկերներ՝ հետագա ոչնչացման համար կամ միացված լինեն սեպտիկ տանկերների և անվտանգ կեղտահեռացման համակարգին:

Այն դեպքերում, երբ օգտագործվում են զուգարաններ, հարկավոր է նախատեսել մեկ զուգարան՝ յուրաքանչյուր 20 մարդու համար: Դրանք պետք է տեղադրված լինեն կառույցների կամ սննդի պատրաստման տարածքներից առնվազն 6 մետր հեռավորության վրա և ջրային հոսանքներից կամ հորերից 20 մետր հեռավորության վրա:

Բոլոր զուգարանները պետք է կառուցվեն այնպես, որ չաղտոտեն տվյալ տարածքի ջրամատակարարման համակարգերը:

Ոչ խորը զուգարանահորերը (մի քանի օրվա համար նախատեսված) պետք է ունենան առնվազն 30 x 75սմ լայնություն և 1-1.5մ խորություն: Խորը զուգարանահորերը (մի քանի ամսվա համար նախատեսված) պետք է ունենան առնվազն 2 - 2.75մ խորություն: Լցվելու դեպքում պետք առնվազն 0.5մ հողե շերտով ծածկել փոսը:

8.3. Կենցաղային աղբ

Տեղամասից հավաքված աղբը պետք է ոչնչացվի դրա համար նախատեսված աղբավայրերում: Ականազերծման ժամանակ թափված աղբը պետք է մաքրվի:

Աղբը կարող է հողում թաղվել միայն տեղական համայնքի/իշխանությունների թույլտվության դեպքում և փոխադարձաբար համաձայնեցված վայրերում:

Աղբափոսերը պետք է փորվեն ջրային հոսանքներից կամ հորերից հեռու գտնվող վայրերում և պետք է այնպես կառուցվեն, որ չաղտոտեն ստորգետնյա ջրերը: Աղբափոսի հատակը պետք է լինի առնվազն 2մ ստորգետնյա ջրերի մակարդակից բարձր: Աղբափոսը պետք է այնքան խորը լինի, որպեսզի հնարավոր լինի լցվելու դեպքում այն ծածկել 1մ խորությամբ հողի շերտով:

Հարկավոր է ուշադիր լինել որպեսզի հողում չթաղվեն վտանգավոր աղբի տեսակներ (նավթամթերք, վտանգավոր մետաղներ և այլն):

8.4. Կեղտաջրեր

Լողանալու, լվացվելու կամ խոհանոցի տարածքի աշխատանքների արդյունքում գոյացած կեղտաջրերը պետք է լցվեն ներծծվող փոսեր, որոնք պետք է բավական մեծ լինեն՝ կեղտաջրերի ամբողջ ծավալը պահելու համար: Ներծծող փոսերը պետք է ունենան առնվազն 75սմ x 75սմ լայնություն և 1մ խորություն:

Կեղտաջրերը չպետք է թափվեն հողի բաց մակերեսին կամ ջրային հոսանքների մեջ:

8.5. Կենցաղային ջրամատակարարում

Կենցաղային ջրամատակարարումը պետք է կազմակերպվի այնպես, որ չխանգարի համայնքի ջրամատակարարմանը: Հակառակ դեպքում հարկավոր է խորհրդակցել համայնքի բնակիչների հետ և համաձայնեցնել ջրամատակարարման փոփոխված կարգը:

8.6. Վառելիքի, նավթի և քսայուղերի (ՎՆՔ) տարածքներ

Ականազերծող կազմակերպությունները պետք է ապահովեն, որ աշխատանքի ընթացքում կիրառվեն համապատասխան կարգեր, որոնց համաձայն ՎՆՔ-ի արտահասքն անմիջապես պետք է մաքրվի: ՎՆՔ-ի թափվելու արդյունքում աղտոտված նյութերը պետք է հավաքվեն և ոչնչացվեն հսկվող աղբավայրում կամ այդ նպատակի համար հատկացված և ԱԳԱՄ-ի կողմից թույլատրված վայրում, որտեղ հնարավոր է կանխել հողի մեջ ՎՆՔ արտահոսքը:

Այն դեպքերում, երբ անհրաժեշտ է կառուցել վառելիքի պահեստներ, հարկավոր է ստանձնել կանխարգելիչ քայլեր և ապահովել ՎՆՔ անվտանգ և ապահով պահպանումը ու թույլ չտալ, որ այն աղտոտի հողը կամ ստորգետնյա ջրերը: Կանխարգելիչ քայլերից են՝

- ա. Վառելիքի պահեստը պետք է գտնվի ջրային հոսանքներից առնվազն 30մ հեռու;
- բ. Պահեստավորման համար օգտագործվող բոլոր բաքերը, կոնտեյներները և վառելիքի հեռացման սաքավորումները պետք է անցնեն կանոնավոր տեխնիկական սպասարկում և զննում՝ երաշխավորելու համար արտահոսքի բացակայությունը;
- գ. Փոխադրամիջոցները և սարքավորումները պետք է վառելիքով լցվորվեն հարթ մակերեսի կամ մեծ թավայանման հարթակի վրա՝ որպեսզի թափված ՎՆՔ մաքրվի և հեռացվի շրջակա միջավայրի համար անվնաս եղանակով:

8.7. Պահպանման տարածքներ

Այն դեպքերում, երբ պահանջվում է փոխադրամիջոցների, մեքենաների և սարքավորումների տեխնիկական սպասարկում, նորոգում կամ լվացում աշխատանքային տեղամասում, հարկավոր է առանձին տեղ հատկացնել այդ նպատակի համար: Բնապահպանական միջոցառումների թվում են՝

- ա. Կեղտաջրերը չպետք է թափվեն այնպես, որ դրանք թափանցեն ջրային հոսանքների մեջ;
- բ. Չորացված նավթամթերքը պետք է հավաքվի թափայի կամ որևէ այլ տարայի միջոցով և հեռացվի/ոչնչացվի/ շրջակա միջավայրի համար անվնաս եղանակով;
- գ. Տեխնիկական սպասարկման ընթացքում օգտագործված մասերը, կողմնակի նյութերը կամ այլ աղբը (բացի օգտագործված քսայուղերից) պետք է ոչնչացվեն այնպես, ինչպես կենցաղային աղբի դեպքում է:

8.8. Ականազերծման աշխատանքների ավարտից հետո կատարվող քայլեր

Ականազերծման աշխատանքների ավարտից հետո բոլոր շենքերը, սարքավորումները, ավելացած նյութերը, ցանկապատները (բացառությամբ վտանգավոր տարածքները նշագրող ցանկապատներից) և մյուս նմանատիպ առարկաները պետք է հեռացվեն տարածքից: Զուգարանները, ներծծող փոսերը և աղբափոսերը պետք է լցվեն, ծածկվեն հողով և պատվեն մակերեսային շերտով՝ ողողամաշումից խուսափելու և բուսականության բնական աճն ապահովելու համար:

Հնարավորության դեպքում հարկավոր է վերականգնել բոլոր խանխարված տարածքները, որոնց վնաս է հասցվել՝ բերելով իրենց նախնական տեսքին:

9. Վտանգավոր նյութերի տեղափոխումը

Բնապահպանական վնաս հասցնելու հավանականություն ունեցող վտանգավոր, թունավոր կամ դյուրավատ նյութերը տեղափոխելիս հարկավոր է ռիսկը նվազագույնին հասցնող կանխարգելիչ միջոցառումներ իրականացնել, այդ թվում՝

- ա. Բոլոր նյութերը տեղափոխել կոնտեյներներով՝ նվազեցնելու կամ կանխելու համար հեղուկի թափվելը կամ արտահոսքը;
- բ. Նյութերն անվտանգ և ապահով կերպով բեռնել տրանսպորտային միջոց;
- գ. Իրականացնել տեղափոխվող նյութերին համապատասխան հակահրդեհային միջոցառումներ;
- դ. Վտանգավոր նյութեր պարունակող փոխադրամիջոցները վարել անվտանգ և զգույշ կերպով;
- ե. Փոխադրամիջոցները պետք է համապատասխանեն այդ նյութերի փոխադրման մասին ԱԳԱՄ-ի կամ շահառու երկրի կանոնակարգերին:

“Պայթուցիկների պահեստավորման, տեղափոխման և պահպանման մասին ՀԱԳՄՉ 10.50”-ում ներկայացված են ակնազերծող կազմակերպության կողմից օգտագործվող պայթուցիկ զինամթերքի անվտանգ պահպանման, տեղափոխման և օգտագործման վերաբերյալ մասնագրեր և ուղեցույց:

Բացի այդ, հնարավորության դեպքերում, վտանգավոր նյութերի տեղափոխումը պետք է կատարվի միջազգային չափորոշիչների համաձայն (տես նորմատիվային փաստաթղթերը):

10. Մշակութային կամ պատմական արժեք ներկայացնող տարածքներ

Ակնազերծման աշխատանքները կարող են կատարվել պատմական կամ մշակութային արժեք ներկայացնող տարածքներում: Նման դեպքերում ակնազերծող կազմակերպությունը պետք է ստանձնի բոլոր հնարավոր քայլերը՝ կանխելու համար այդ տարածքին հասցվող վտանգը:

Այսպիսի քայլերից կարող է լինել աշխատանքային տեղամասում հայնաբերած ակնների կամ ՊՊՄ տեղափոխումը ոչնչացման այլ վայր: Եթե դրանց տեղափոխումը վտանգավոր է և հարկավոր է տեղում վնասազերծել, ապա հարկավոր է իրականացնել պաշտպանիչ միջոցառումներ:

Եթե ակնազերծման ժամանակ հայտնաբերվել է որևէ առարկա, որը կասկածվում է, որ պատմամշակութային արժեք է, այդ տարածքում աշխատանքները պետք է դադարեցվեն և դեպքի մասին հարկավոր է զեկուցել ԱԳԱՄ-ին:

Այն դեպքերում, երբ գործողությունների ժամանակ հայտնաբերվում են մարդկու դիակի մնացորդներ, հարկավոր է հետևել Մարդու մասին միջազգային օրենքի դրույթներին: ՀԱԳՄՉ 10.10 10-ում ներկայացված է լրացուցիչ մեթոդական ուղեցույց:

11. Բնապահպանական պատահարներ

Բնապահպանական պատահարների մասին հարկավոր է տեղեկացնել ԱԳԱՄ-ին՝ պատահարից անմիջապես հետո հնարավորինս սեղմ ժամկետներում: Հարկավոր է տեղեկացնել պատահարի հետ կապված բոլոր հանգամանքների, ստանձնած քայլերի, դրանց արդյունքների և շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության մասին:

ԱԳԱՄ-ը կարող է հետաքննել ականագերծման ժամանակ պատահած բնապահպանական պատահարը:

12. Պատասխանատվություններ և պարտավորություններ

12.1. ԱԳԱՄ-ի պարտավորություններ

ԱԳԱՄ-ը կամ վերջինիս անունից գործող կազմակերպությունը պետք է՝

- ա. Հակաականային գործողությունների ազգային չափորոշիչներում կամ այլ համապատասխան փաստաթղթերում սահմանի շրջակա միջավայրի կառավարման իր վարած քաղաքականությունը: Այդ քաղաքականությունը պետք է համահունչ լինի ազգային քաղաքականության հետ;
- բ. Իրականացնի ականագերծող կազմակերպությունների կողմից սահմանված շրջակա միջավայրի կառավարման պահանջների պատշաճ իրականացումը;
- գ. Ապահովի, որ ականագերծման գործողությունները պլանավորելիս հաշվի առնվեն շրջակա միջավայրի պաշտպանության հարցերը;
- դ. Վարի զեկուցած բնապահպանական պատահարների գրանցամատյան;
- ե. Անհրաժեշտության դեպքերում հետաքննի բնապահպանական պատահարները;
- զ. Նշանակալի բնապահպանական պատահարների մասին պաշտոնապես տեղեկացնի ծրագրում գործող մյուս ականագերծող կազմակերպություններին:

12.2. Ականագերծող կազմակերպության պարտավորություններ

Ականագերծող կազմակերպությունը պետք է՝

- ա. Կատարի ԱԳԱՄ-ի շրջակա միջավայրի կառավարման քաղաքականության պահանջները;
- բ. Գործառնական ստանդարտ ընթացակարգվարգերում (ԳՍԸ) կամ այլ համապատասխան փաստաթղթում սահմանի շրջակա միջավայրի կառավարման քաղաքականության պահանջները և ապահովի, որ բոլոր աշխատողներն իրազեկված լինեն այդ պահանջների մասին;
- գ. Ապահովի, որ շրջակա միջավայրի պաշտպանության գործունը հաշվի առնվի ականագերծման բոլոր աշխատանքները պլանավորելիս և իրականացնելիս;
- դ. Վարի զեկուցած բնապահպանական պատահարների գրանցամատյան;
- ե. Բնապահպանական պատահարների մասին տեղեկացնի ԱԳԱՄ-ին կամ վերջինիս անունից հանդես եկող կազմակերպությանը:

ԱԳԱՄ-ի կամ վերջնիսի անունից հանդես եկող կազմակերպության բացակայության դեպքում ակննագերծող կազմակերպությունը պետք է, ԱԳԱՄ ստեղծելու ընթացքում, օգնի շահառու երկրին սահմանել շրջակա միջավայրի պաշտպանության ազգային չափորոշիչներ:

Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր

Հետևյալ նորմատիվ փաստաթղթերը պարունակում են դրույթներ, որոնք այս տեքստի հղումների միջոցով կազմում են չափորոշիչի այս մասի դրույթները: Ամսաթվեր պարունակող հղումների դեպքում՝ այդ հրապարակումներում հետագայում կատարված փոփոխությունները կամ վերանայումները չեն կիրառվում: Սակայն չափորոշիչի այս մասի վրա հիմնված համաձայնագրերի կողմերին խրախուսվում է հնարավորություն գտնել՝ ստորև նշված նորմատիվ փաստաթղթերի առավել թարմ տարբերակները կիրառելու համար: Ամսաթիվ չպարունակող հղումների դեպքում կիրառվում է այդ նորմատիվ փաստաթղթի ամենավերջին տարբերակը: ISO-ի և IEC-ի անդամներն ունեն վավեր ISO կամ EN գրանցամատյան.

- ա. ՀԱԳՄՉ 04.10 Ականազերծման գործողությունների տերմիններ, սահմանումներ և հապավումներ;
- բ. ՀԱԳՄՉ 08.30 Ականազերծումից հետո ձևակերպվող փաստաթղթերը;
- գ. ՀԱԳՄՉ 10.50 Ա և ԱՀ – Պայթուցիկների պահեստավորումը, տեղափոխումը և պահպանումը;
- դ. ՀԱԳՄՉ 11.10 Ուղեցույց հակահետևանքային ականների զինապաշարների ոչնչացման մասին;
- ե. ՀԱԳՏՕ 10.10 Ուղեցույց հակահետևանքային գործողությունների ժամանակ կուտակված արտաթորանքի հեռացման մասին (նախագիծ);
- զ. ՀԱԳՏՕ 09.30.02 Սպառված ուրանի վնասազերծում;
- է. ՄԳ 14000 Շրջակա միջավայրի կառավարում (տես Հավելված Գ);
- ը. Ճանապարհներով վտանգավոր ապրանքների միջազգային տեղափոխման մասին եվրոպական համաձայնագիր (ADR)¹:

Պետք է օգտագործվի թվարկված փաստաթղթերի վերջին տարբերակը/հրատարակությունը: Այս չափորոշիչում կիրառված բոլոր փաստաթղթերի պատճենները պահպանվում են ՄԱԺՄԿ-ում (Մարդասիրական ականազերծման Ժնևի միջազգային կենտրոն): ՀԱԳՄՉ չափորոշիչների, ուղղորդիչ սկզբունքների և փաստաթղթերի վերջին տարբերակների/թողարկումների գրանցամատյանը պահպանվում է ՄԱԺՄԿ կողմից և տեղակայված է ՀԱԳՄՉ կայքէջում (տես www.mineactionstandards.org): ԱԳԱՄ-ը, գործատուները և շահագրգիռ այլ մարմինները ու կազմակերպություններ պետք է նախքան ականազերծման ծրագրեր սկսելը ձեռք բերեն դրանց պատճենները:

¹ Ճանապարհներով վտանգավոր ապրանքների միջազգային տեղափոխման մասին եվրոպական համաձայնագիրը (ADR) կնքվել է Ժնևում, 30.11.1957թ-ի՝ ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնախմբի հովանու ներքո: Ուժի մեջ է մտել 29.01.1968թ: Համաձայնագրի տեքստը փոփոխվել է 14-րդ հոդվածի 3-րդ կետի փոփոխման մասին Նյու Յորքում 21.08.1975թ կնքված Արձանագրության միջոցով, որն ուժի մեջ է մտել 19.04.1985թ:

Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հապավումներ

Բ.1

Հակահետևակային ականներ (ՀՀԱ)

Ական, որը նախատեսված է պայթեցնել մարդու ներկայությամբ, մոտ հեռավորությամբ կամ շփման միջոցով և որը հաշմանդամ է դարձնում, վիրավորում է կամ սպանում մեկ կամ ավելի մարդկանց:

Նշում՝ Ձինամթերք, որը նախատեսված է հողի կամ էլ որևէ այլ մակերեսի տակ, վրան կամ կողքին տեղադրելու և մարդու կամ սարքավորման անմիջական ներկայության, մոտ հեռավորության կամ շփման միջոցով պայթեցնելու համար: [MBT]

Բ.2

Ականազերծում

Մարդասիրական ականազերծում

Գործողություններ, որոնք տանում են դեպի ականների և ՊՊՄ վտանգի վերացում, ներառյալ տեխնիկական հետազոտումը, քարտեզագրումը, ականազերծումը, նշագրումը, հետևանազեծման փաստաթղթերի կազմումը, ականազերծման գործողություններում համայնքի հետ կապի ապահովումը և ականազերծված/մաքրված տարածքների հանձնումը: Ականազերծումը կարող է կատարվել տարբեր տեսակի կազմակերպությունների կողմից, ինչպես օրինակ հասարակական կազմակերպությունները, առևտրային ընկերությունները, ականազերծման գործողությունների ազգային թիմերը կամ զինվորական ստորաբաժանումները: Ականազերծումը կարող է հիմնված լինել արտակարգ իրավիճակների վրա կամ լինել զարգացումնային:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցում ականների և ՊՊՄ վնասազերծումը համարվում է ականազերծման գործընթացի միայն մի մասը:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցում ականազերծումը համարվում է հակաականային գործողությունների միայն մի մասը:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցում ականազերծում և մարդասիրական ականազերծում տերմինները համարժեք են:

Բ.3.

Ականազերծող կազմակերպություն

վերաբերում է ցանկացած կազմակերպությանը (պետական, ՀԿ կամ առևտրային հաստատությանը), որը պատասխանատու է ականազերծման ծրագրեր կամ առաջադրանքներ կատարելու համար: Ականազերծող կազմակերպությունները կարող են լինել հիմնական կապալառու, ենթակապալառու, խորհրդատու կամ գործակալ:

Բ.4

Տեղում ոչնչացում

Տեղում պայթեցում

Ձինամթերքի միավորի ոչնչացում պայթուցիկների միջոցով՝ առանց այն հայտնաբերած տեղից շարժելու կամ տեղափոխելու: Սովորաբար պայթեցվում է շուրջբոլորը՝ պայթուցիկ նյութի լիցք տեղադրելով:

Բ.5

Շրջակա միջավայրի կառավարման համակարգ (ՇՄԿՀ)

Կազմակերպության կառավարման համակարգի մասը, որն օգտագործվում է սեփական բնապահպանական քաղաքականություն մշակելու և իրականացնելու, ինչպես նաև բնապահպանական հարցերը կառավարելու նպատակով:

- Նշում՝ Կառավարման համակարգը բաղկացած է քաղաքականություն և խնդիրներ սահմանելու և դրանք իրականացնելու համար կիրառվող միջազգային բաղադրիչներից:
- Նշում՝ Կառավարման համակարգը ներառում է կազմակերպական կառուցվածքը, պլանավորած գործողությունները, պատասխանատվությունները, գործելակարգերը, ընթացակարգերը, գործընթացները և ռեսուրսները:

Բ.6

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում (ՇՄԱԳ)

Հակաականային գործողությունների կենսաֆիզիկական, սոցիալական և այլ համապատասխան ազդեցությունների սահմանումը, կանխումը, գնահատումը և մեղմումը՝ նախքան որոշումների կայացումը և պարտավորությունների ստանձնումը:

Բ.7

Պայթուցիկ զինամթերքի վնասազերծում (ՊԶՎ)

ՊՊՄ-ի հայտնաբերումը, տեսակի որոշումը, գնահատումը, վնասազերծումը, վերականգնումը և ոչնչացումը: ՊԶՎ կարող է իրականացվել՝

- ա. որպես ականազերծման աշպատանքների ամենօրյա մաս՝ ՊՊՄ-ի հայտնաբերումից հետո
- բ. ականների տարածքից դուրս վայրում հայտնաբերված ՊՊՄ-ը ոչնչացնելու նպատակով (սա կարող է լինել մեկ ՊՊՄ կամ ավելի մեծ քանակությամբ՝ որևէ առանձին տարածքում)
- գ. Վնասվելու կամ ոչնչացման փորձի արդյունքում վտանգավոր դարձած ՊԶ ոչնչացնելու նպատակով:

Բ.8

Վտանգի (վտանգավոր) տարածք

Աղտոտված տարածք

Ընդհանրական տերմին, որը վերաբերում է ականների, ՉՁ կամ այլ պայթուցիկ առարկաների կասկածվող կամ փաստացի առկայության պատճառով արտադրական նպատակով չօգտագործվող հողերին:

Բ.9

Նպատակային օգտագործում (հող)

Հողի օգտագործումը ականազերծումից հետո:

- Նշում՝ Նպատակային օգտագործում՝ ապրանքի, գործընթացի կամ ծառայության օգտագործում՝ դրանց մատակարարի տրամադրած տեղեկությունների համաձայն: [ISO Guide 51:1999(E)]
- Նշում՝ Հողի նպատակային նշանակությամբ օգտագործումը պետք է ներառվի ականազերծման հանձնարարականի մասնագրում և հանձնարարականի հանձնման փաստաթղթերում:

Բ.10

Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)

Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)

ականներ ունեցող յուրաքանչյուր երկրի պետական վարչություններ, կազմակերպություններ կամ հաստատություններ, որոնց հանձնարարված է կանոնակարգել, կառավարել և համակարգել ականազերծման գործողությունները:

Նշում՝ Հիմնականում ազգային ԱԳԱԿ կամ նրան հավասարագոր մարմինը գործում է որպես ԱԳԱՄ կամ նրա անունից:

Նշում՝ Որոշ իրավիճակներում և որոշակի պահերին ՄԱԿ կամ այլ ճանաչված միջազգային մարմնի համար կարող է անհրաժեշտ և պատշաճ լինել ստանձնել ԱԳԱՄ որոշ կամ բոլոր պարտականությունները և իրականացնել որոշ կամ բոլոր գործառույթները:

Բ. 11

Հակաականային գործողությունների կենտրոն (ՀԱԳԿ)

Հակաականային գործողությունների համակարգման կենտրոն (ՀԱԳՀԿ)

Կազմակերպություն, որն իրականացնում է ԱՎԻ ուսուցում, ականապատ տարածքների հետազոտում, ականների մասին տվյալների հավաքում և կենտրոնացում և համակարգում է հակաականային գործողությունների տեղական ծրագրերը արտաքին գործակալությունների, ՀԿ-ների կամ տեղական ականազերծողների հակաականային գործողությունների հետ: [ՄԱԿ-ի տերմինաբանական տեղեկագիր No. 349]: Հակաականային գործողությունների ազգային ծրագրերի համար ՀԱԳԿ/ՀԱԳՀԿ սովորաբար գործում է որպես ԱԳԱՄ-ի գործառնական գրասենյակ:

Հավելված Գ (Տեղեկատվական) Ծանոթացում Շրջակա միջավայրի կառավարման ISO 14000 չափորոշիչին

Գ.1

Շրջակա միջավայրի կառավարման համակարգերի EN ISO 14000 շարքը Ազգային չափորոշիչների ընդունման հետ կապված՝ (BS 7750:1994 դրանցից առաջինն էր) ISO-ը մշակեց շրջակա միջավայրի կառավարման կամ ընտրական չափորոշիչների և ուղեցույցների մի շարք, որոնք, միասին վերցված, հայտնի են որպես EN ISO 14000 շարք: EN ISO 14000 շարքը, ինչպես նշվում է EN-ի նախաբանում, ընդունվել է Եվրամիության ստանդարտացման կազմակերպության (CEN) կողմից: Սա նշանակում է, որ Եվրամիության անդամ երկրները Եվրամիության հանձնարարականով, բոլոր դեպքերում, պետք է կիրառեն ISO 14000-ը:

Մշակված լինելով ISO-ի 207 Տեխնիկական կոմիտեի կողմից, 14000 չափորոշիչների շարքը անդրադառնում է շրջակա միջավայրի կառավարման հետևյալ խնդիրներին.

- Շրջակա միջավայրի կառավարման համակարգ (EM ISO 14001)
- Շրջակա միջավայրի աուդիտ և հարակից ստուգազննումներ
- Շրջակա միջավայրին առնչվող պիտակներ և հայտարարություններ
- Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված աշխատանքների գնահատում
- Կյանքի շրջափուլի գնահատում
- Ջերմոցային գազեր

Գ.2

ISO 14000-ի բովանդակությունը

EN ISO 14000 շարքը անհրաժեշտ պայմաններ է ապահովում շրջակա միջավայրի կառավարման համակարգ և դրան օժանդակող աուդիտային ծրագիր մշակելու համար: Վերջիններիս մշակման անհրաժեշտությունը հաստատվեց 1992-ին Ռիոյում կայացած շրջակա միջավայրին վերաբերող վեհաժողովի, ինչպես նաև, 2002թ-ին Յոհանեսբուրգում կայացած համաշխարհային վեհաժողովի արդյունքում:

EN ISO 14001-ը վերջին անգամ վերանայվել է 2004թ-ին և հանդիսանում է EN ISO 14000 շարքի առանցքը: Այն սահմանում է շրջակա միջավայրի կառավարման վերահսկողության շրջանակները, որը իրականացնելու նպատակով կազմակերպությունը կարող է վկայագիր ստանալ երրորդ կողմից: Այս շարքի մյուս չափորոշիչները, ըստ էության, ուղեցույցներ են, որոնցից շատերը հնարավորություն են տալիս ստանալ EN ISO 14001-ի վկայագիր: Հատկանշական են հատկապես դրանցից հետևյալները².

ISO 14004 ուղեցույց է տրամադրում շրջակա միջավայրի կառավարման համակարգերի մշակման համար

ISO 14010 ներկայացնում է շրջակա միջավայրի աուդիտի հիմնական սկզբունքները (ներկայումս փոխարինվել է EN ISO 19011-ով)

ISO 14011 ներկայացնում է հատուկ ուղեցույցներ շրջակա միջավայրի աուդիտ իրականացնելու նպատակով (այժմ փոխարինվել է EN ISO 19011-ով)

² EN ISO 14000 շարքի չափորոշիչների ամբողջական ցանկը ներկայացված է <http://www.iso.org/iso/en/CatalogueListPage.CatalogueList?ICS1=13&ICS2=20&ICS3=10&scopelist=> կայքէջում:

ISO 14012 ներկայացնում է ուղեցույցներ կապված շրջակա միջավայրի աուդիտ իրականացնող անձնակազմի և առաջատար աուդիտորների որակավորման հետ (ներկայումս փոխարինվել է EN ISO 19011-ով)

ISO 14013/5-ը տրամադրում է աուդիտային ծրագրերի վերանայմանը և գնահատմանը վերաբերող նյութեր

EN ISO 14020-ն անդրադառնում է պիտակավորման խնդիրներին

ISO 14030-ն անդրադառնում է շրջակա միջավայրի կառավարման համակարգում աշխատանքային թիրախներին և մոնիտորինգին առնչվող ուղեցույցներին

EN ISO 14040-ն անդրադառնում է կյանքի ցիկլին առնչվող հարցերին

Գ.3

ISO 14000-ի սկզբունքները

Այս բոլոր չափորոշիչներից EN ISO 14001-ն ոչ միայն ամենից հայտնին է, այլև այն միակ չափորոշիչն է, որը ներկայումս հնարավորություն է տալիս վկայագիր ստանալ վկայագիր տրամադրող արտաքին կազմակերպության կողմից:

Թեև EN ISO 14001-ն նկարագրում և ցուցումներ է տալիս կազմակերպություններին այն մասին, թե ինչպես բացահայտել և կառավարել իրենց գործունեության, ապրանքների կամ ծառայությունների բոլոր զգալի բնապահպանական ազդեցությունները, այնուհանդերձ հստակ չի սահմանում բնապահպանական կատարողականի բացարձակ պահանջները, բացի շարունակական բարելավման պահանջ դնելուց: Քանի որ նշյալ չափորոշիչի նպատակն է բարելավել բնապահպանական կատարողականը, վերջինիս մեթոդաբանությունը ներառում է արդյունավետ կառավարման մեխանիզմների մշակումը, որոնք ինտեգրվում են կազմակերպության կառավարման համակարգ՝ շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված նշված քաղաքականությամբ սահմանված նպատակներին հասնելու համար:

EN ISO 14000-ից բխող EMS-ի էական տարրերը ստուգման ենթակա պահանջներն են: Ստորև ներկայացված են ISO 14004-ի հինգ հիմնական տարրերը (Շրջակա միջավայրի կառավարման համակարգեր – Սահմանումը և օգտագործման ուղեցույցը).

- *Շրջակա միջավայրին ուղղված քաղաքականություն*
- *Պլանավորում*
 - Շրջակա միջավայրին առնչվող հարցեր
 - Օրենսդրական և այլ պահանջներ
 - Նպատակներ և թիրախներ
 - Շրջակա միջավայրի կառավարման ծրագիր (ծրագրեր)
- *Ներդրում և իրագործում*
 - Կառուցվածքը և պատասխանատվության շրջանակները
 - Ուսուցում, իրազեկում և իրավասություն
 - Հաղորդակցություն
 - Շրջակա միջավայրին առնչվող փաստաթղթերի կազմում
 - Փաստաթղթերի վերահսկում
 - Գործողությունների վերահսկում
 - Արագ արձագանքման և արտակարգ իրավիճակներում գործելու պատրաստվածություն
- *Ստուգում և ուղղումներ*
 - Մոնիտորինգ և գնահատում
 - Անհամապատասխանություն և ուղղիչ կամ կանխարգելիչ գործողություններ
 - Գրանցումներ
 - Շրջակա միջավայրի կառավարման համակարգի աուդիտ

- *Կառավարման վերանայում*

Գ.4

ISO 14000–ի հիմնական սկզբունքները

EMS–ը կարծրացած համակարգ չէ. կազմակերպության փոփոխվող պահանջները բավարարելու նպատակով այն պետք է անընդհատ վերանայվի: EN ISO 14001 կադապարը հիմնված է հետադարձ կապի շարունակականության սկզբունքի վրա:

Պլանավորել-կատարել-գործել-ստուգել

Աշխատանքները սկսվում են քաղաքականություն մշակելով, այնուհետև կատարվում է գործողությունների պլանավորում և քաղաքականության իրականացում /ներդրում/, իրականացվում են ստուգագնումներ և ուղղումներ, որից հետո վերանայվում են կառավարմանն առնչվող խնդիրները, այնուհետև ստացված տեղեկատվությունը կրկին կիրառվում է քաղաքականությունը մշակելիս: Թեև հավաքված տեղեկատվությունը կարող է հանգեցնել կազմակերպության ծրագրերի, նպատակների և թիրախների վերանայմանը /արդիականացմանը/՝ հետադարձ կապը պետք է շարունակական բնույթ կրի և նպաստի շրջակա միջավայրի բարելավմանը:

Հավելված Դ
(Տեղեկատվական)
Շրջակա միջավայրի կառավարմանն ուղղված ժամանակավոր
հարմարությունների ցանկ

Ստորև ցանկը կարող է օգնել դեկավար անձնակազմին, ինչպես նաև աշխատողներին հավաստիանալու համար, թե շրջակա միջավայրի կառավարմանն առնչվող այս կամ այն միջոցառումը՝ կապված ժամանակավոր հարմարությունների օգտագործման հետ, իրականացվել է, թե ոչ:

Դ.1 Տեղանքի ընտրություն

- Ընտրություն կատարելիս հարկավոր է խորհրդակցել տեղական համայնքների դեկավարների հետ:
- Նախապատվությունը տրվում է արդեն իսկ եղած ճանապարհներին և տարածքներին:
- Հարկավոր է խուսափել գյուղատնտեսական նշանակության բերրի հողերից, ինչպես նաև այն տարածքներից, որոնք բնապահպանական առումով զգայուն են:
- Հարկավոր է ապահովել խմելու ջրի մատակարարման, արտաթորանքի հեռացման, կեղտաջրերի և աղբի հեռացման, միջատների և կրծողների վերահսկման, սննդի պատրաստման և մատուցման և տարածքից կեղտաջրերի հեռացման անվտանգությունը:
- Հնարավորության դեպքում հարկավոր է խուսափել տարածքը բուսականությունից մաքրելուց, կամ եթե հնարավոր է բույսերը ձեռքով հեռացնել, խուսափել հողին վնաս հասցնելուց և փորելուց:
- Տեղանքը պետք է լինի կայուն, ջրահեռացման լավ համակարգով, անհրաժեշտության դեպքում հողի խորությունը լինի բավարար՝ գուգարանափոսեր, կեղտաջրերի հեռացման համար նախատեսված փոսեր և աղբի պահպանման համար նախատեսված փոսեր փորելու համար:

Դ.2 Ջրամատակարարում

- Պետք է կազմակերպված լինի այնպես, որ հարակից տարածքի հողօգտագործողները, հողատերերը և համայնքները չզրկվեն ջրից:
- Ջուրը օգտագործման համար լինի անվտանգ լինի:

Դ.3 Պինդ թափոններ

- Բոլոր տարածքները հարկավոր է մաքուր պահել աղբից և թափոններից:
- Ողջ աշխատակազմը պետք է ծանոթացված լինի սննդի և այլ թափոնների հեռացման կարգին:
- Պինդ աղբի համար նախատեսված տարրաները /կոնտեյներները/ պետք է.
 - Լինեն բավականաչափ մեծ՝ հեռացման ժամանակահատվածների միջև աղբը պահելու համար:
 - Հնարավորություն տան առանձնացնելու այրելի աղբը մյուս աղբից:
 - Անհասանելի լինեն կենդանիների և միջատների՝ մասնավորապես կրծողների համար:
 - Նախատեսված լինեն նաև ծորած /դուրս հոսած/ հեղուկների պահպանման համար:
 - Կանոնավոր կերպով հեռացվեն:

- [] Աղբը հեռացվում է մշակման կամ հնարավորության դեպքում համապատասխան վայրերում կուտակելու համար: Տվյալ տարածք տանող ճանապարհների շուրջ կուտակված թափոնները և աղբը պետք է մաքրվի:
- [] Տարածքում գտնվող անխուսափելի աղբի հեռացում:
 - [] Այն աղբը, որը հնարավոր է այրել, կանոնավոր կերպով այրվում է և թաղվում համապատասխան փոսերում: Ամեն անգամ այրելուց /տեղափոխելուց հետո մոխիրը ծածկվում է հողով:
 - [] Մյուս թափոնները թաղվում են փոսում և ամեն օր ծածկվում:
 - [] Թափոնները թաղելու համար նախատեսված բոլոր փոսերը պետք է գտնվեն հոսող ջրերից հեռու՝ հոսող ջրերի, լճերի, և ջրավազանների աղտոտումից խուսափելու նպատակով: Փոսերի հատակը պետք է լինի ստորգետնյա ջրերի մակարդակից առնվազն 2մ բարձր:
- [] Թունավոր և վտանգավոր թափոնները հավաքվում են և տեղափոխվում դրանց համար նախատեսված հատուկ վայր:

Դ.4 Արտաթորանք

- [] Արտաթորանքը չպետք է հեռացվի հոսող ջրերի միջոցով կամ թողնվի հողի մակերեսին:
- [] Հնարավորության դեպքում, այս նպատակին են ծառայում ժամանակավոր զուգարանները, որոնք պետք է ունենան. (1) պահելու համար տարողություններ /տանկերներ/, որոնց պարունակությունը հետագայում կտեղափոխվի հատուկ մեքենաներ՝ համապատասխան վայրեր տեղափոխելու համար կամ (2) հատուկ տարողություններ և ապահով հեռացման /դրենաժային/ համակարգեր:
- [] Զուգարանահորերի օգտագործումը.
 - [] Յուրաքանչյուր 20 մարդու համար պետք է առնվազն մեկ հոր նախատեսված լինի:
 - [] Այդ հորերը պետք է գտնվեն բոլոր կառույցներից կամ սննդի պատրաստման վայրերից առնվազն 6 մ հեռավորության վրա, և առնվազն 15մ (գերադասելի է ավելին) հեռու հոսող ջրերից, ջրհորերից կամ խմելու ջրի այլ աղբյուրներից:
 - [] Մակերեսային ջրերը պետք է հեռացվեն փոսերից և ոչ թե ուղղվեն փոսերը:
 - [] Ոչ խորը զուգարանահորերը (նախատեսված մի քանի օրվա համար) պետք է ունենան 30սմ լայնություն, 75սմ երկարություն և 1-1.5 մ խորություն:
 - [] Խորը զուգարանահորերը (նախատեսված մի քանի ամսվա համար) պետք է ունենան մոտ 2-2.75 մ խորություն:
 - [] Դրանք պետք է կանոնավոր կերպով մշակվեն:

Դ.5 Կեղտաջրեր

- [] Լվացվելու, լողանալու կամ խոհանոցի համար առանձնացված տարածքներից կեղտաջրերը պետք է ուղղվեն համապատասխան հորեր՝ անշուշտ եթե դրանց ծավալը մեծ չէ:
- [] Չպետք է թույլ տալ ջրերի ներթափանցումը հոսող ջրեր կամ ջրահեռացման խողովակներ:
- [] Զրահեռացման հորերը պետք է.
 - [] Լինեն համապատասխան չափի և քանակի հեռացված ջրային ծավալները կուտակելու համար և պետք է առնվազն 50սմ բարձր լինեն ստորգետնյա ջրերի մակարդակից:
 - [] Պետք է ծածկված լինեն քաթանով կամ նմանատիպ նյութով, ամրացվեն եզրերից և եզրագծվեն խճաքարերով և գլաքարերով:
 - [] Կանոնավոր կերպով մշակվեն հակամանրէային նյութերով:

Դ.6 Դեմոքրիլիզացիա

- [] Բոլոր ժամանակավոր կառույցները և ճամբարային ենթակառուցվածքները, ներառյալ շենքերը, սարքավորումները, անպետք իրերը, թափոնները, ավելցուկային նյութերը, ցանկապատերը և այլ նմանատիպ իրերը պետք է ամբողջապես հեռացվեն:
- [] Զուգարանափոսերը, կեղտաջրերի հեռացման հորերը, ինչպես նաև աղբի հեռացման նպատակով փորված փոսերը ամբողջապես պետք է լցվեն և ծածկվեն հողով, իսկ մակերեսը պետք է մշակվի՝ ողողամաշումը կանխարգելելու և բուսականության բնական աճը ապահովելու նպատակով:
- [] Ճանապարհի հողային պաստառը, ժամանակավոր ջրահեռացման և ջրատար խողովակները և այլն, պետք է հեռացվեն և տարածքը պետք է մշակվի:
Անհրաժեշտության դեպքում, հեռացված նյութերը պետք է փոխարինվեն համապատասխան այլ նյութերով:
- [] Պետք է վերագործարկել սկզբնական դրենաժային համակարգը:
- [] Գործնական և ցանկալի է, որ բոլոր տարածքները բերվեն իրենց նախնական վիճակին:

Փոփոխությունների գրանցում

ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կառավարում

ՀԱՄՉ-ի չափորոշիչների շարքը ենթակա է պաշտոնական վերանայման երեք տարին մեկ, սակայն սա չի բացառում այդ երեք տարիների ընթացքում փոփոխությունների կատարումը՝ ելնելով գործառնական անվտանգության և արդյունավետության կամ խմբագրական հանգամանքներից:

Այս ՀԱՄՉ-ի փոփոխությունների կատարման դեպքում դրանք համարակալվում են և այդ փոփոխությունների կատարման ամսաթիվն ու ընդհանուր մանրամասները նշվում են ստորև բերված աղյուսակում: Փոփոխությունները նաև պետք է նշվեն ՀԱՄՉ-ի առաջին էջում՝ թողարկման ամսաթվի տակ ներառելով «Ներառված են փոփոխություն թիվ 1 և այլն» արտահայտությունը:

Յուրաքանչյուր ՀԱՄՉ-ի պաշտոնական վերանայումից հետո կարող են թողարկվել նոր խմբագրությունները: Մինչև նոր հրատարակությունը կատարված փոփոխությունները կընդգրկվեն նոր հրատարակության մեջ և փոփոխությունների աղյուսակը կմաքրվի: Դրանից հետո կրկին կսկսվի փոփոխությունների գրանցումը, մինչև նոր վերանայում իրականացվի:

ՀԱՄՉ-ի ամենավերջին փոփոխությունները այն տարբերակներն են, որոնք տեղադրվում են ՀԱՄՉ-ի կայքէջում՝ www.mineactionstandards.org:

Թիվ	Ամսաթիվ	Փոփոխության մանրամասներ